ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 31 >> 05 2013թ. N: 129-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ N15 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ «ԳՅՈՒՄՐՈՒ N15 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 46-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 2-ի N 774-Ն որոշմամբ հաստատված «Ավագ և հիմնական դպրոցների ցանկի» 16-րդ կետը՝

որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N 15 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանել «Գյումրու N 15 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N 15 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2002 թվականի նոյեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի մի շարք պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները հաստատելու մասին» թիվ 66 որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետը:

4. Հանձնարարել «Գյումրու N 15 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Սեդա Համբարձումյանին՝ տասնօրյա ժամկետում ապահովել կանոնադրության պետական գրանցման գործընթացը:

5. Որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ս. Մինասյանին :

Ֆ. ՅՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝